Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Հոդված 381. Վերաքննիչ բողոքը և վարույթ ընդունելը

1. Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) տվյալներ՝ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը, բնակության կամ գտնվելու վայրը.

3) դատական ակտը, որը բողոքարկվում է, և այն կայացրած դատարանի անվանումը.

4) նշում այն մասին, թե դատական ակտը բողոքարկվում է ամբողջությամբ, թե մի մասով.

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5[1]) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջբերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.

6) առկայության դեպքում՝ այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում նախօրոք չհետազոտված ապացույցները.

7) բողոքին կցվող նյութերի ցանկը.

8) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը:

2. Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին՝ վերաքննիչ դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը:~~Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա~~

~~չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375[4]-հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:~~

2[1]. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը թողնում է առանց քննության, եթե՝

1) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է.

2) վերաքննիչ բողոքը ներկայացրել է անձ, որը վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք չուներ.

3) բողոքարկվել է դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով.

4) վերաքննիչ բողոք ներկայացրած անձը մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը դիմում է ներկայացրել վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին.

5) բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել.

6) բողոքը բերվել է սույն օրենսգրքի 375[4]-րդ հոդվածի պահանջի խախտմամբ:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել գործի դատական քննության ընթացքում:

4. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-211-Ն)***

5. Ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է նախագահողը:

6. Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը կարող է մերժել միայն այն դեպքում, երբ չեն պահպանվել վերաքննիչ բողոքին առաջադրվող պահանջները, բացառությամբ այն դեպքի, երբ վերաքննիչ բողոքը բերվել է սույն օրենսգրքի 376[1] հոդվածի 2-րդ կետով նախատեսված դատական ակտի դեմ, որի հիմքերի բավարարության հարցը վերաքննիչ դատարանը լուծում է կոլեգիալ կազմով: